

# Գրական Թերթ

ISSN 1829- 1627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ \* ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1932-ԻՑ

Տղա գրվում է ՀՀ Մեակույթի նախարարության աջակցությամբ [www.grakantert.am](http://www.grakantert.am)

## Պիտանկյուն

### ԶՐԱՅԻՆ ԶԻՆԱԴԱԴԱՐ

Ինչ «կորոնավիրուսային պանդեմիա» բառակապակցությունը դարձել է սովորական, և մեր սովորական կյանքը, հաշված օրերի ընթացքում 180 աստիճան դարձաշուրջ, վերածվել է անսովորի, քանի՜ անգամ են հիշել «Մաուզի» մուլտֆիլմի այն դրվագը, երբ ջունգլիներ է գալիս մեծ երաշուր, և հայտարարվում է ջրային զինադադար: Ու որս ու որսորդ, ժամանակավորապես մոռանալով ջունգլիների դաժան օրենքը, նույն ջրից են խմում կողք կողքի... Եվ ամեն անգամ հիշելիս փորձում են չզարմանալ ու համակերպվել մեր շուրջը կատարվող և օրեցօր թափ հավաքող երևույթի՞ն ասեն, թե՞ լավ հաշվարկված, ամեն պահ թիկունքից չարանենգ հարվածի պատրաստվող մարտավարությանը: Այն, որ իշխանությանը լավագույնս կարելի է հարվածել սոցիալական խնդիրներով, փորձված ու արդյունավետ միջոց է: Բայց՝ բնականոն կյանքի պայմաններում: Իսկ ա՞յս օրերին, երբ համաշխարհային տնտեսական ու մնացած բոլոր ճգնաժամերը ուղտի պես չոքել են նաև մեր երկրի դռները: Շահարկել՝ իբր մոռանալով, որ երկրիդ ռազմավարական հիմնասյուն ոլորտները ա՛յս իշխանությունը չի նվիրել ուրիշին: Իբր, որովհետև ժողովրդի սոված ու տնանկ վիճակի մասին այս օրերին ամենաբարձր գոռացողների կենսագրությունները ուղղակի կամ անուղղակի առնչվում են հենց այն ժամանակաշրջանի ու անձանց հետ, երբ մեր գազը, ջուրը, կապը, երկաթուղին... համարյա ամեն ինչ տրվեց օտարին: Իսկ երբ քո ռազմավարական կարևոր պաշարները ինքնակամ տվել են օտարին, ուրեմն և լավ են գիտակցում, որ այդ լծակը դամոկլյան սրի պես կախված է երկրիդ գլխին և ամեն պահի կարող է խառնվել քո ներքին գործերին, սոցիալական բողոք բարձրացնել և այն քաղաքականի վերածել: Հա՛, քաղաքականությունը աշխարհի ամենահին փեշակներից է, բայց քաղաքիդ դարպասների բանալիները հանձնելու կամ այլ երկրի բանակ հրավիրելու սցենարները դեռ կարող են գայթակղել... թեկուզ փոքր կամ փոքրաթիվ մարդկանց...


Այս համաճարակը, մարդկանց տներում փակելով, բացել է բնության շունչը. օդը, երկինքը, ջուրը մաքրվում-գուլարվում են: Մուլտֆիլմում կենդանիները հաշտվում են ընդհանուր վտանգի առաջ: Ինչո՞ւ են՝ այդքան միամիտս, կարծում էի, որ աղետը, թեկուզ ժամանակավոր, «ջրային զինադադար» կբերի մեր տուն, որ կարողանանք դիմագրավել այս փորձությանը ևս...

ՀԳ. Թե որքան արդյունավետ են կառավարության ձեռնարկած միջոցները, հաստատ չեմ կարող ասել՝ ժամանակը ցույց կտա: Որ պարզավաճար կոչվածը լավ էլ թուլացնում է այս իշխանության վստահության հիմքերը, վստահ են ու քանիցս են բարձրաձայնել: Որ վարվող թավշյա քաղաքականությունը պատասխանատվության բացակայություն է և Օրենքի գերակայության բացառում՝ ցավալի, իսկ նախկին վարչակարգի քաղաքական գնահատական չտալը աններելի իրողություն է: Բայց ես կանգնել եմ հեղափոխության կողքին, իմ վստահության քվեով է նաև իշխանությունը լեգիտիմացվել, և ուրեմն՝ իմն է նաև նրա «սևն ու ճերմակը» քննելը: Ու քանի որ «ջրային զինադադար» չեղավ, վերադառնում են «Դիտանկյանը», որովհետև զգում են՝ վտանգ կա օդում, պետք է դիմագրավել քաղաքի դարպասների բանալիները հանձնողներին կամ օտար բանակ հրավիրողներին...

Կարինե ԽՈՒԴԻՅԱՆ

## ՔՈՎԻԴ - ՔՐՈՆԻԿՈՆ

Մանվել ՄԻԿՈՅԱՆ



### ՊԱՏՊԱՆԵՆՔ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՎԱՐՔԱԳԻԾՐ

Եթե որևէ մեկն այս օրերին ասի, թե ինքը գերծ է վախի ու տագնապի զգացողություններից, առնվազն ստում է: Այդ զգացողությունները բոլորիս համակեցին հատկապես այն ժամանակ, երբ առաջին անգամ արտակարգ դրություն հայտարարվեց մեր երկրում: Այն ավելի խորացավ, երբ արտակարգ դրության ռեժիմը երկարաձգվեց մինչև մայիսի 14-ը: «Լոռու մարզ» և «Երկունք» թերթերը տպագրության են նախապատրաստվում նույն խմբագրությունում՝ նույն աշխատակիցների ջանքերով:

Մարտի 16-ից հետո՝ մեկ շաբաթ անց, որոշեցինք աշխատանքային հինգ օրվա փոխարեն սահմանափակվել երկու օրով՝ երկուշաբթի և հինգշաբթի, որովհետև մյուս օրերին շաբաթը երկու անգամ տպագրվում է «Լոռու մարզ»: Չնայած ծանրաբեռնվածությանը՝ «Երկունք» ամսաթերթի 3-րդ համարը հրատարակեցինք երկու մամուլով, արդեն տպագրվել է նաև 4-րդ համարը: Չնայած դժվարություններ ծագեցին «Հայփոստին» և «Պրես Ստենդին» առաքման հարցում, բայց ելքը գտել ենք, և թերթերը տպագրվում են սովորական գրաֆիկով: Ես, որպես հիշյալ երկու թերթերի խմբագիր, աշխատում եմ նաև մնացած օրերին՝ ներառյալ շաբաթ և կիրակի օրերը:

Մարտ և ապրիլ ամիսներին ՀԳՄԼոռու մարզային բաժանմունքը նախատեսել էր մի շաբթ միջոցառումներ, որոնք հետաձգվեցին: Իսկ «Արարատ Սկրտումյան» մրցանակաբաշխությունն արդեն ամփոփել ենք, հայտարարել արդյունքները: Մրցանակաբաշխության հանդիսությունը կկայանա արտակարգ իրավիճակի ավարտից հետո, Ալավերդի քաղաքում: Թվում էր՝ ստեղծագործական կյանքը պետք է ընդհատվի, սակայն անցած երկու ամսում գրել եմ բանաստեղծությունների մի ստվար շարք՝ առանց շրջանցելու ներկա իրավիճակի հոգեբանական դրսևորումները, տրամադրությունները: Այս օրերին բոլորս համոզվեցինք, որ կենդանի շփումը հարազատների, ընկերների և ծանոթների հետ ոչնչով հնարավոր չէ փոխարինել: Կարոտի մեղմացումը օնլայն տարբերակով լիովին ձայնողված է:

Որքա՞ն կտևի այս ամենը: Հարցը մնում է օդում կախված՝ ծանրացնելով շնչառությունը, սակայն նաև ինքնափորձարկման բացառիկ հնարավորություն տալով: Նույնիսկ այս պայմաններում խնջույքների մասնակցելու հրավերներ են լինում «անվախ» ընկերների կողմից, որոնք մերժվում են:

Բայց ամենադաժանը մտերիմների հետ կապված տխուր առիթներն են, որոնց չմասնակցելը, նրանց ձեռքը չսեղմելը հոգեբանորեն ոչնչացնող ազդեցություն է գործում՝ չնայած նրանք ըմբռնումով են մոտենում այս ամենին: Այս իրավիճակը բացառիկ առիթ է նաև սրբագրումներ կատարելու մեր շրջապատի մարդկանց բարոյահոգեբանական փոփոխությունների վերաբերյալ: Այն մարդիկ, ովքեր սովորական պայմաններում բարի ու կամեցող էին, այժմ այդ հատկանիշներով ավելի ցայտուն են դրսևորվում: Մրտացավության և հոգատարության որոշակի դրական տեղաշարժ է նկատվում այն մարդկանց շրջանում, ովքեր երբևէ չեն փայլել այդ հատկանիշներով: Սակայն մեծ հաշվով այդ մարդիկ ի վիճակի չեն փոխվելու, որովհետև մեկ անգամ ևս համոզվում ենք, որ ոչ մի համաճարակ կամ բնական՝ թեկուզ ամենասարսափելի աղետ ի գործ ոչ փոխել մարդու էությունը, որի կարծրանալու գործընթացն անկասելի է: Մարդկությունն իր գոյության ողջ ընթացքում պահպանվել և զարգացել է բարձր ոլորտներում գտնվող հոգեկերտվածք ունեցողների շնորհիվ, ու այդպես էլ շարունակվելու է: Հատկապես այս օրերին պետք է ավելի հանդուրժող և ներողամիտ լինենք գեղնաբարձ էություն ունեցողների նկատմամբ՝ նրանց դարձի բերելու դժվարին գործը թողնելով Բարձրային: Խոսքն, իհարկե, չի վերաբերում մարդկանց քրեական դրսևորումներին: Ինչպես բոլոր աղետները, այս մեկն էլ կանցնի, և տա Աստված, որ նվազագույն լինեն կորուստները: Մնում է՝ պահպանենք արժանապատիվ վարքագիծը ոչ միայն աշխատանքում, այլև մարդկային հարաբերություններում:



ԲԱԿՈՒՐ

### ՆԱՄԱՃԱՐԱԿԵ ՈՒ ԶԱՄԱՍՊ ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՆ

Պոետ ընկերս զանգեց ու հետաքրքրվեց, թե ինչպես են տանում համաշխարհային համավարակը: Ներողություն խնդրելով համաճարակին վերագրվող հազարավոր զոհերի հարազատներից՝ պատասխանեցի, որ օգտվելով կարամսի մի ընձեռած հնարավորությունից՝ վաղուց ծրագրված պատմավեպ եմ սկսել գրել, և մտահոգություն հայտնեցի, թե հանկարծ շուտ չվերջանա այս ամենը, ու անավարտ մնա պատմավեպը: Հանրության նորմալ կյանք մտնելու դեպքում ստիպված պետք է լինեմ գնալ հանդիպումների, շարունակել կիսատ մնացած գեղանկարչական կտավները, հնագիտական խմբի հետ մեկնել Արցախ, բացի այդ, լուծել կենսական հարցեր:

Գրական գործունեությունս որոշ ժամանակ խափանվեց համաճարակին զուգահեռ արցախյան ընտրությունների ընթացքում: Իմ բացահայտումներն ու հրապարակումները անապասելիորեն վճռական դեր չխաղացին, քանի որ, պարզվում է, Արցախում դեռևս պաշտում են ցանկացած ձևով հարստացած մարդկանց, իսկ ծայրահեղ աղքատ ու ծայրավաճառ մարդիկ դեռևս չափից դուրս շատ են: Ահա հիմա էլ «Գրական թերթի» խմբագրի պատվերով համաճարակի մասին հոդված եմ գրում, սակայն, ինչ մեղքս թաքցնեմ, ամեն վայրկյան մտքիս մեջ պատմավեպի դրվագներն են, գլխավոր հերոսի՝ Իրանի արքայից արքա Ջամասայի (թագավորել է 496-500 թթ.) ճակատագիրը:

Վերադառնամ համավարակի հետ կապված խուճապին, որի հետևանքով խիստ վտանգավոր ճգնաժամի մեջ է հայտնվել մարդկությունը: Թվում է, թե այս ամենը անհայտ «ընտրյալների» խմբի սարքած գործն է՝ նպատակ ունենալով մարդկային քաղաքակրթության հետագա զարգացումը տարերայինից տեղափոխել կառավարելի դաշտ, սակայն այդ ընթացքում այս ամենը խոշոր խաղաղոցների միջև գուցե և չնախատես-

Շարունակությունը՝ էջ 2



Գուրգեն ԳԱՍՊԱՐՅԱՆ

Գրիգոր Հակոբյանը (1958-2005), մեր ժամանակների համար գուցե փոքր-ինչ տարօրինակ և արտասովոր ե-ռանդով, իր ողջ կյանքը և ժամանակը նվիրեց հայ գրականության ուսումնասիրմանը: Եվ իրոք, դժվար է անցումային ժամանակներում լավատես լինել, և միշտ էլ հատուկեմտ են բնության պարզևած այն անհատականությունները, որոնք խավարի մեջ վառ են պահում հուստ ջահը: Գրիգոր Հակոբյանն, իրապես, նրանցից մեկն էր: Ուսումնասիրելով նրա թողած գործերը՝ մենագրություններ, գիտական հոդվածներ, փորձագրություններ և գրախոսություններ, ելույթներ և հրապարակումներ, համոզվում ես, որ գիտնականի կյանքն անմնացորդ գործունեություն է եղել, անվերջ փնտրությունների և հայտնագործությունների, մշտապես նոր հանգրվաններ նվաճելու ուղի: Տեսական բարձր պատրաստվածությունը, հայ և համաշխարհային գրականության և գրականագիտական մտքի նորագույն արդյունքներին քաջածանոթ լինելը իրենց հստակ հետքն են թողել գիտնականի գրեթե բոլոր երկերում:

Հակոբյանի գրականագիտության բնորոշ առանձնահատկություններից մեկը հայ նոր գրականության բազում անծանոթ կամ նվազ հայտնի անունների և իրողությունների վերհանումներն են, որոնք ոչ թե սպիտակ էջերը լցնելու միտում ունեն, այլ բխում են գիտնականի՝ գրականության պատմություն եզրի նորովի ընկալումից և մեկնաբանությունից: Գրականության պատմությունը, ըստ Հակոբյանի, ոչ թե գրողների և նրանց երկերի իրարահաջորդ թվարկումներով է ձևավորվում, այլ տվյալ շրջափուլում մշակութաբանական ընդհանուր միտումների և դրանց գրականացման ձևերի բացահայտմամբ: Սա է պատճառը, որ Գր. Հակոբյանի գրեթե բոլոր ուսումնասիրություններում գերիշխող է տեսական դատումների շերտը: Գիտնականն իր ուսումնասիրման առարկան է դարձնում գրական արտադրանքի ժանրային-կառուցվածքային ձևերը՝ դրանց ծագումնաբանությունը, զարգացումն ու անկումը դարձնելով գրականության պատմության հենքը: Նման մոտեցման դեպքում ինքնին արժևորվում են թե՛ հանրահայտ, թե՛ սովորյալ մնացած, թե՛ երկրորդական հեղինակների երկերը, քանի որ գրական վարպետության խնդիրը մտահոգում է բոլորին, իսկ ժանրագիտության և ժանրի պատմության մեջ ընդհանուր միտումների բացահայտումը հնարավորություն է ստեղծում առավելագույն ճշգրտությամբ սահմանել յուրաքանչյուր ստեղծագործության մշակութաբանական արժեքը: Սա իրապես նոր հայացք է մտնեցում էր, որ Գրիգոր Հակոբյանի բազում երկերում իր լիարժեք արտահայտությունն է գտել: Հիշենք, թեկուզ «Արևմտահայ նորավեպը. 1890-1910-ական թվականներ. ժանրի պատմություն և տեսություն», «Թերթոն վեպի տեսությունը. Երվանդ Օտյան» մենագրությունները, «Վեպի ժանրի օջակայան մետատեսությունը» և այլ բազմաթիվ հայ դասական ու արդի արձակի նվիրված հոդվածներն ու ուսումնասիրությունները:

Հատկապես մեծ է Գրիգոր Հակոբյանի վաստակը հայ դասական նորավեպի ուսումնասիրման խնդրում: Կենտրոնում ունենալով Գրիգոր Չոխրապի ստեղծագործությունը՝ գիտնականը նորավեպագրության մի ողջ դպրոց հայտնագործեց՝ բազմաթիվ նոր անուններով և երկերով, որոնք սփռված էին 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արևմտահայ բազմաթիվ մամուլի էջերում: Արձակի կարճ ձևերի բուռն զարգացումը 19-րդ դարավերջին վերջնականապես թրթափեց հայ գրականությունը ոչ գրական շերտերից (հրապարակախոսական, մանկավարժական, բարոյախոսական և այլն), գրական նոր դպրոցների (նատուրալիզմ, սիմվոլիզմ) սկզբունքային կարգախոսներն իրացվում էին նոր սերնդի հայ գրողների կողմից, ուր արձակի կենտրոնական դեմքը Գրիգոր Չոխրապին էր: Ի դեպ, Գրիգոր Չոխրապի ստեղծագործությանն էր նվիրված Գրիգոր Հակոբյանի թեկնածուական ատենախոսությունը («Գրիգոր Չոխրապի նորավեպերի պոետիկան»): Հակոբյանը, բացի «Արևմտահայ նորավեպը» հիմնարար աշխատությունից, բազմաթիվ հոդվածներ է նվիրել այդ սերնդի առանձին գրողների ստեղծագործությունների՝ հատկապես այդ շերտի ուսումնասիրմանը («Քսանթրոդ դարասկզբի հայ նորավեպի պատմությունից», «Գեղարվեստական փոքր արձակը «Արևելյան մամուլ»-ում (1880-1909)», «Նովելային ձևերի սկզբնավորումը Գրիգոր Չոխրապի պոետիկայում», «Աղետի և դիմակայության անդրադարձները արևմտահայ նորավեպագրության մեջ», «Ժանրային պարականոն դրսևորումները արևմտահայ նորավեպի

գեղարվեստական համակարգում», «Արշակ Չոպանյանը 1880-1890-ական թվականների արևմտահայ արձակի համակարգում», «Մուրթ Ծնունդի և Կաղանդի անդրադարձումները արևմտահայ նորավեպի գեղարվեստական համակարգում», «Վահան Թեքեյանի նորավեպերը» և այլն):

Մեծարժեք են Հակոբյանի ուսումնասիրությունները, այսպես կոչված, «երկրորդային» գրականության՝ հուշագրությունների, առանձին գրողների նամակահիմների ուսումնասիրման գործում: Պարբերական մամուլում բազում հրապարակումներ և ուսումնասիրություններ ունի գիտնականը այս ուղղությամբ: Բացի ճանաչողական արժեքից, մեկնաբանության այս եղանակը (բնագիր-մեկնություն), ըստ Հակոբյանի, գրականագիտությունը դուրս է բերում ենթակայական դեգերումներից և առավելագույնս ապահովում է առարկայական դատումների շրջան՝ դառնալով առավել արդյունավետ և ուսանելի: Հակոբյանի ուսումնասիրությունների բնորոշ ձևերից է սա, երբ բնագրի հրապարակումը ուղեկցվում է ծավալուն առաջաբանով և գիտական ապարատով: Այս գործերի շարքում հատկապես կարևորվում են Չապել և Հրանտ Ասատուրների նամակագրության, ինչպես նաև Երվանդ Օտյանի նորագույն հուշագրության («Անիծյալ տարիներ», 1914-1918. անձնական հիշատակներ) հայտնաբերումն ու հրապարակումը առանձին գրքերով: Այս առումով գիտնականը նոր շրջանի ակադեմիական գի-

Գիրքը ներկայացնում է խմբագիրը

«Նորք» գրական հանդեսի գրաքննադատության բաժինը: Այս գրախոսությունները ոչ թե սուկական գրություններ են՝ արդի գրական ընթացքին հավուր պատշաճի արձագանքելու համար, այլ փոքրածավալ գիտական ուսումնասիրություններ, ուր արժևորվում է յուրաքանչյուր գրքի գրապատմական արժեքը հայ գրականության ընդհանուր ենթաբնագրում: Այս հրապարակումների շարքում նշանակալի ծավալ ունեն սփյուռքի ժամանակակից գրականությանը նվիրված գրախոսությունները, որոնք տպագրվել են թե՛ հայրենի, թե՛ սփյուռքի պարբերականներում: Այս հոդվածներն ընդգրկող ժողովածուն լույս տեսավ 2018 թ. (Գրիգոր Հակոբյան, Հոդվածներ, կազմեցին Գուրգեն Գասպարյանը և Արքմենիկ Նիկողոսյանը, Երևան, Անտարես, 244 էջ):

Բացի գրականագիտական ուսումնասիրություններից Գր. Հակոբյանի ժառանգության մեջ նշանակալի տեղ ունեն նրա կազմած ուսումնական գիտաօժանդակ ձեռնարկներն ու անթոլոգիաները: Դրանց թվում խիստ արժեքավոր են «Արևմտահայ նորավեպի անթոլոգիան» և «Արևմտահայ և սփյուռքահայ գրականության անթոլոգիան», որոնք կազմված են հմուտ մանկավարժի և գիտնականի բանիմացությամբ, և որոնց կարիքը խիստ զգալի է բուհական ուսուցման համակարգում: Հայ գրականութ-

ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈՒԲՅԱՆ. հոդվածներ



յուն դասավանդելով Գևորգյան հոգևոր ճեմարանում, Սևանի հոգևոր դպրանոցում և Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների համալսարանում՝ գիտնականը քաջ գիտակցում էր արևմտահայ և հատկապես սփյուռքահայ գրականության մասին գիտելիքների պակասը լրացնելու անհրաժեշտությունը: Հակոբյանի՝ որպես մանկավարժի և դասախոսի հիշատակը մշտապես վառ է թե՛ նրա ճեմարանական սաների և գործընկերների, թե՛ համալսարանական ուսանողության շրջանում:

Այս շարքից 2007 թ. «Նաիրի» հրատարակչությունը լույս ընծայեց «Հայ դասական նորավեպ (XIX-XX դդ. արևմտահայ նովելի նմուշներ)» ժողովածուն (կազմեց և ծանոթագրեց Գր. Հակոբյանը, 320 էջ):

Բազում ծրագրեր ունեցող գիտնականը, բազում երազանքներ, որոնց առանցքը միայն և միայն հայ մշակույթն էր ու արվեստը: Կյանքի վերջին շրջանում Հակոբյանը կազմում էր սփյուռքահայ գրականության դասավանդման գիտամեթոդական ուղեցույց և անթոլոգիա, որն անավարտ մնաց: Հեղինակը հասցրել է անթոլոգացնել Կարայիս Դանճիկյանին, Չախրատին, Հակոբ Մեծուրուն, Ծավալը Նարդունուն, Մուշեղ Իշխանին, Անդրանիկ Ծառուկյանին, Վահե Օջակյանին, Իշխան Դինապաշյանին նվիրված գլուխները՝ համապատասխան նախաբաններով և բնագրերով: Ընթացքի մեջ էր «Ժամանակ» օրաթերթի հիմնադիր, հրատարակիչ, առաջին խմբագիր, հրապարակախոս, նորավեպագիր, վիպասան, թատերգակ, թարգմանիչ, քրոնիկագիր, ազգային-հանրային գործիչ Քասիմի (Միսաք Գոչումյան) (1863-1913) նորավեպերի և պատկերների ընտրանու աշխատանքը: Հակոբյանն սկսել էր Դևոն Մելոյանի ստեղծագործության ուսումնասիրության նախապատրաստական աշխատանքները, զուգահեռաբար սկսել և ավարտին էր հասցնելու «Գրվածքներ XX դարասկզբի արձակի ստեղծաբանական փիլիսոփայության և կենսափիլիսոփայության պատմությունից» հիմնարար աշխատությունը, որից մի հատված է պահպանվել նրա թողածներում և այլն:

Գրականագիտական վիթխարի փորձառությունը դեռ նոր հորիզոններ էր նվաճելու՝ ընդլայնելով մեր պատկերացումներն ու գիտելիքները հայ գրականության, մեր ունեցած իրական մտավոր հարստության սահմանների մասին: Եվ այդ ճանապարհին Գրիգոր Հակոբյանը անվերապահորեն առաջամարտիկ էր, իսկ նրա հեռացումը անվերականգնելի կորուստ, որը սակայն ապրված կյանքի խորհուրդ և պատգամ է մեզ համար, օրինակության արժանի ճանապարհ, գործի մեծության համեմատ համեստության տիպար...



Սամվել ԿՈՍՅԱԼ

Երագում էի միլիոն դոլար գտնել: Այնքան ոգեշնչված էի, որ այդ մտքից արդեն շատերն էին ոգևորվել ու սկսել էին ինձ չափից դուրս մոտ-մոտ անել՝ մտածելով միլիոնից բաժին պոկել: Ոչ մեկին չէի մերժում: Ու երբ յուրաքանչյուրին իր բաժինը խոստանալուց հետո փորձեցի հաշվել՝ տակն ինչ մնաց, պարզվեց, որ միլիոնից մի հարյուր հազար ավելի եմ բաժանել, ուստի ում խոստացել ու դեռ ոչինչ չէի տվել, մտովի ներողություն խնդրելով՝ մտածեցի միլիոնի մասին ընդհանրապես մոռանալ: Այդ որոշմանը նպաստեց նաև աշխարհի ամենահարուստ մարդկանցից մեկի՝ Սթիվ Ջոբսի մահից առաջ թողած գրությունը: Միլիարդատերը գրել էր, որ 30 դոլար արժեքով ժամացույցը և այն մեկը, որը 300 դոլար արժի, նույն ժամանակն են ցույց տալիս: 150000 արժեքով մեքենայով, թե 30 հազարանոցով, ճանապարհին ու տարածությունը միատեսակ են: Եթե այս ամենը մահից առաջ գրած չլիներ, կմտածեի՝ մեծահարուստի հերթական կոկետությունն է, քանի որ ամբողջ կյանքում ձգտել է հարստանալ, վստահ, որ թանկն ավելի արագ ցույց կտա ժամանակը և առավելագույն կկրճատի ճանապարհը:

Ես էլ էի երևակայում, որ միլիոնը կօգնեի հասարակության մեջ կարևորել իմ խոսքն ու դիրքը, վերջապես կազատեի սովորական և աննշան լինելու բարդությունից: Մակայն հասկացա, որ հիմար խաղի մեջ եմ ընկել, և որ նման անընթացությունը լավ հանգրվանի չի հասցնի: Միայն խելագարը կարող է միլիոն կորցնել, այն դեպքում, երբ ասինքն է, որ խելագարը միլիոն ունենա: Միաժամանակ, հարուստ լինես թե աղքատ, շատ ուտես թե քիչ, ճանապարհորդես թե տանը մնաս, կյանքը նույնն է, կյանքի քանկն ու էժանը չկա, որովհետև մահը բոլոր կյանքերին նույն գինն է տալիս: Վերջ ցնորքին:

Մինչև հիմա ընդամենը 10 դրամանոց մետաղադրամ էի գտել՝ փոխարենը գրկելով ինձ երկնքին ու աստղերին նայելու հաճույքից: Այլևս գլուխս խոնարհած չեմ քայլելու, հայացքով ասֆալտը չեմ մաշելու, ինչից աչքերիս գույնն էլ փոխվել ու ասֆալտից չի տարբերվում: Մարդկանց դեմքերն էլ եմ մոռացել ու, ո՛վ գիտի, քանիսի կողքով անցել ու չեմ նկատել:

Հայացքս գետնից կտրելուց հետո, որքան էլ անսպասելի ու տարօրինակ էր, առաջինը Սոնայի դեմքը տպավորեց, ում հետ հարաբերություններս վաղուց էի խզել: Փորձեցի շրջանցել, իբր, չեմ նկատել, սակայն ձայն տվեց, ու նրա բնավորությանը ծանոթ լինելով՝ ստիպված էի կանգնել: Սոնան, առանց բարևելու, միանգամից վրա տվեց.

- Միլիոնը գտա՞ր:
- Ի՞նչ միլիոն:

- Չլինի՞ր գտել ես, որ ծանոթներիդ չնկատելու ես տալիս:
- Որտեղի՞ց գիտես:
- Արտակին 50 հազար էիր խոստացել:
- Ինչքան հիշում եմ՝ Արտակը չես:
- Ամուսնանալուց հետո մի քիչ Արտակ էլ ես կլինեմ:
- Բա ինչո՞ւ ինձ հետ չամուսնացար:
- Որովհետև քո սիրո պաշարն ընդամենը մի շաբաթ կհերիքեր:
- Նրանք ինչքա՞ն է:
- Մինչ մահ...
- Կնշանակի՞ր անմահությունը երկուսիդ էլ հարմար կլինի:
- Ավելի լավ է՝ 50 հազարը տաս:
- Որ գտնեմ:
- Գտնես՝ ձայն տուր: Գտնե մի անգամ գործը վաղվան մի՞թող,- ու առանց հրաժեշտ տալու, հեզմակամ ժպիտը դեմքին՝ հեռացավ:

Սոնայի հեզմանքին թեև ծանոթ էի, սակայն երբ հրաժարվել կամ փորձում էի հրաժարվել միլիոն գտնելու գայթակղությունից, այս հանդիպման տհաճությունից ներսս միանգամից կնճռոտվեց: Սոնային տեսնելը վատ

- Փողը ե՞րբ կարող ես տալ:
- Երբ գտնեմ:
- Գիտեի՞ր անլուրջ ես, բայց ոչ այս աստիճանի... Պիտի իմանաս, որ ընկերոջ ողբերգությունը ծաղրի վերածելը զգվելի է:
- Ախր...- ու շարունակեցի, որովհետև վերջին բառերից հետո հեռախոսն անջատել էր: Պարզվում է՝ ինչքան վիճահարույց է անհեթեթ մտահղացումը, նույնքան դժվար է առանց հետևանքների դրանից հրաժարվելը: Ընչու և ճիշտ ինչպես այն անեկոտում, երբ մեկը գնում է հոգեբույժի մոտ՝ հայտնելու, թե ինչո՞ւ ինքը մարդ չէ, այլ գարեհատիկ: Հոգեբույժին, ի վերջո, հաջողվում է հակառակը համոզել: Մակայն վերջին պահին հիվանդը կասկածանքով հարցնում է. «Բժիշկ, որ մարդ եմ, միայն ես ու դու գիտե՞ք, հավերժ գիտե՞ն, որ մարդ եմ, ոչ թե գարեհատիկ»: Իմ պարագայում էլ ոնց որ վիճակը նույնն է: Արդյո՞ք նրանք, որոնց բաժին եմ խոստացել, տեղյակ են, որ խաղն ավարտվել է: Հաստատ չգիտեմ և, երևույթը գնահատելով, հավանաբար, չեմ էլ ուզում իմանալ: Այնպես որ՝ մո՞ղավանջը շարունակվելու է, ու հայտնի չէ՝ ինչքան կտևի: Կասկածս խորացավ, երբ Լիլիթը, ով մեր հարաբերությունները գնահատելիս միշտ գուսպ

# ԽԱՂԻ ԱՌԱՄՅ ԿԱՆՈՆՆԵՐԻ

նշան էր, թեև լավ ու վատ նշանի ընտրությունը ոչ թե քո, այլ մի այլ ուժի ընտրությունն է: Պատահականություններ էլ չեն լինում, բոլոր պատահականությունները որոշակի օրինաչափության հետևանք են:

Կանխագագումը, որ վատ նշանների շղթան, հնարավոր է, Սոնայով չավարտվի, չէր լքում, թվում էր՝ սարդոստայնի վերածվել, որսում ու խժռում էր օրերիս հանդարտությունը: Անգամ հեռախոսագնդերն էին սկսել նյարդայնացնել: Հերթական զանգը նույնպես չարագուշակ թվաց:

- Որ չզանգահարեմ, չես էլ հիշի: Գևորգն էր, ու նրա նեղացկոտ տոնը ստիպեց գզուշանալ:
- Միշտ էլ հիշել եմ:
- Մի՛ ստիր:
- Մտելու ի՞նչ կա:
- Չլինեք, չէի ասի:
- Կարո՞ղ ես պարզ խոսել:
- Լսել եմ՝ միլիոն ես գտել:
- Փնտրում էի, չգտա:
- Միևնույն է: Շատ վիրավորված եմ:
- Ինչի՞ց:
- Ում ասես բաժանել ես: Հիշեիր, մի բան էլ ինձ կհասներ:
- Բեզ ինչքա՞ն է պետք,- հասկանալով, որ դիմադրությունն անօգուտ է, փորձեցի խաղի ռիթմը չփոխել:
- Հարյուր հազարը չէր խանգարի: Չե՞ս իմացել, որ տունս գրավ են դրել...
- Հետո՞...
- Հետո այն, որ կարող եմ փողոցում հայտնվել:
- Ծանր դեպք է:
- Ցավակցելու փոխարեն օգնելու մասին մտածիր:
- Մտածում եմ:
- Շուտ պիտի մտածեիր: Ընկերությունը միայն կենացները չեն: Անկեղծ, հիասթափված եմ:
- Իզուր:

էր, հերթական հանդիպմանը միանգամից ամուսնության մասին խոսք բացեց:

- Ինչի՞ր հանկարծ,- հարցրեցի,- մինչև հիմա խուսափում էիր այդ թեմայից:
- Ամեն թեմա իր ժամանակն ունի,- պատասխանեց մի տեսակ կոտրատվելով, որից թվաց՝ ավազե քանդակ է ու անհարմար շարժումից կարող է ցրիվ գալ:
- Ի՞նչ է փոխվել,- նեղսրտեցի:
- Ուզում եմ՝ ինքդ գլխի ընկնես: Միլիոնի մասին չե՞ս ուզում ասել:
- «Եվ դու, Բրուտո՞ւ»,- հիշեցի, սակայն չարտահայտվեցի՝ մտածելով, որ ճիշտ չի հասկանա:
- Կարող եմք բնակարան գնել, ճոխ հարսանիք, շքեղ ավտոմեքենա,- գնալով ավելի էր ոգևորվում Լիլիթը,- ճանապարհորդություններ՝ Փարիզ, Ամստերդամ, Հավայան կղզիներ... Քանիսի սիրտը նախանձից կճաքի, էն որ երևակայում էին, հիմա կերպարն մտերմանալ, բայց...
- Չարունակես,- չդիմացա ու բղավեցի:- Միլիոնը չկա, մոռացիր: Մի՛ք էր, ցնորք, խաղ էր, որ առանց սկսվելու վերջացավ: Չգտա, չեմ գտել, չեմ գտնելու և այլևս չեմ որոնելու:
- Չբղավես,- իր հերթին պոռթկաց Լիլիթն, ու տեսա, թե ինչպես ավազե քանդակը քարի վերածվեց:- Չբղավես,- կրկնեց և աչքերից ատելություն ժայթքելով՝ եզրափակեց:- Այլևս չզանգահարես:

Պարզվում է՝ հիմարության հետևանքներն իսկապես անկանխատեսելի են: Մարդկության ողբերգությունն է երևի, երազների ետևից գնալով՝ կորցնել իրականությունը: Ես ուզում էի գտնել ու հիմա անընդհատ կորցնում եմ, ու հայտնի չէ՝ էլի ինչքան եմ կորցնելու: Եվ ամենացավալիս, որ մի քանի շաբաթ անց դատարան ներկայանալու ծանուցագիր ստացա: Իմ դեմ դատարան հայց էին ներկայացրել՝ պահանջելով խոստումներիս տեր լինել ու պարտքերս մարել:

## գրական անցուղարձ գրական անցուղարձ գրական անցուղարձ գրական անցուղարձ գրական անցուղարձ գրական անցուղարձ գրական անցուղարձ գրական անցուղարձ

### Գրողների միությունը լույս է ընծայել «Տողը կը խօսի» ժողովածուն

Հայոց ցեղասպանության 105-րդ տարելիցին ընդառաջ Հայաստանի գրողների միությունը հրատարակել է «Տողը կը խօսի» ժողովածուն, որում ընդգրկված են եղեռնագոհ գրողների ստեղծագործությունները:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ գրքում ներառվել են Գանիել Վարուժանի, Միամանթոյի, Ռուբեն Մևակի, Արտաշես Հարությունյանի, Գրիգոր Չոհրապի, Երուխանի, Թլկատինցու, Գեղամ Բարսեղյանի, Տիգրան Չոքորյանի և Ռուբեն Չարաբյանի գործերը:

Մեզ հետ գրույցում Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանն ասաց, որ գիրքը 2015 թվականին հրատարակվել է չորս լեզվով՝ անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն:

Գերմաներեն գիրքը լույս է տեսել նաև Գերմանիա-

յում: Գրքի շնորհանդեսն անցկացվել է Մագդեբուրգ քաղաքի Սուրբ Հովհաննես եկեղեցում, այնուհետև այն ներկայացվել է Հալլեի քաղաքապետարանում: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին չորս լեզվով հրատարակված գիրքը ցուցադրվել է Մոսկվայում, Վիեննայում, Մայնի Ֆրանկֆուրտում, Սալոնիկում, Ժնևում, Փարիզում և այլուր:

«Հայոց լեզվով գիրքը նոր ենք հրատարակել: Աշխատում էինք այն օտար լեզուներով ներկայացնել՝ միջազգային հանրությանը ծանոթացնելով եղեռնագոհ գրողների ստեղծագործություններին:



Այժմ մտածում ենք այն թարգմանել նաև այլ օտար լեզուներով»,-նշեց Միլիտոնյանը:

Գիրքը կազմել է Հայաստանի գրողների միությունը, այն լույս է ընծայել «Վան Արյան» հրատարակչությունը՝ Լեոնիդ Գոգոլյանի աջակցությամբ:

Ծրագրի ղեկավարն ու խմբագիրն Էդվարդ Միլիտոնյանն է, կազմողները՝ Հերմինե Նավասարդյանն ու Տիգրան Գաբրյանը:

Անժելա ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱԼ



Գոհար ՆԿՈՂՈՍՅԱՆ

«Զամին, աշնան քամին...»  
Եղիշե Չարենց

Մի փիստ ունեի, եթե մեծ կտոր միս տա-  
յի, կեսը կուտեր, կեսը կտաներ-կպահեր՝  
նեղ օրվա: Կարծում էի՝ կեղտոտելու հա-  
մար է եղ անկյուն-տեղը մտնում: Պարզվեց՝  
ամբար ունի: Երբեք չեմ սիրել պահածոնե-  
րը, բայց մուրաբաների նկատմամբ ընդձե-  
րված թուլություն ունեմ: Եվ մույնիսկ  
վիրավորական է, որ կողքիս լսեմ՝ մուրա-  
բայի էս մի տեսակը սիրում եմ, էն մեկը՝ չէ:  
Մա՞րդը: Մարդը սիրում է կուտակել,  
պահել, ունենալ մթերք, ռազմամթերք, հույ-  
սեր, վրեժներ, ամեն-ամեն բան: Ու մայր  
բնությունն էլ ինձ ու իմ փեսաներին է  
նման՝ էսպիսինն է: Պահեստային  
դեռ շատ լավաներ-վատաներ, գան-  
ձեր ու գաղտնիքներ ունի պահած:

\*\*\*

Առաջին տարիներին, ամեն դեկ-  
տեմբեր-յոթին ես Սբ. Գրիգոր Լուսավորիչ  
էի գնում: Հիմա չեմ գնում: Սրտով-հոգով  
եկեղեցու հետ եմ, բայց հենց որ ակտի-  
վանում եմ, որպես հավատացյալ՝ աճում-  
գորանում, ակտիվանում է մալ ինձ  
շրջապատող աշխարհը իր բազմաժանր ու  
բազմախոս հավատացյալներով: Եկեղե-  
ցին միայն Սգո տունն չէ: Կա մալ Ծառ-  
գարդար: Բայց արարողություններին  
մասնակցելիս համբերատար չէի:

\*\*\*

Մտանք գյումրեցի Անյեյնց տուն: Անոն  
ինձ նկուղ տարավ: Տեսա՝ մի չորս-հինգ  
խանութի ապրանք կա լցված: Պահածո-  
ներ, շոկոլադեներ, թթվեղեն, ձավարեղեն,  
ջրեղեն, ոգելից: Ամեն ինչ: Ասաց՝ ինչ կու-  
զես, ընտրիր: Կինը դու ես: Փողն էլ քիչ-քիչ  
կտաս:

Նոր տարվա շեմին էր: Ու համոզված  
եմ, որ մի յոթ տարի առաջ էր էլի, դեկտեմ-  
բեր-7-ին: Անմիջապես կողմնորոշվեցի, որ  
գինի պետք է: Բոնբոներկա՝ մի քանի  
տուփ, հյուր ընդունելիս, գնալիս: Հատիկե-  
ղեն, պահածոներ, հատկապես՝ մուրաբա:  
Ես ու ընկերս մի 7-8 հազար դրամի գրվե-  
ցինք:

Ու մինչև հաջորդ Նոր տարին մարելու  
էինք պարտքը միասին: Անոն վատառողջ  
էր, գնալով նիհարում էր: Ընկերս ասում էր,  
որ իր այդ ազգականուհին ժածքից մազա-  
պտրծ եղածներից է: Հղի է եղել այդ ժամա-  
նակ: Հետո ունեցել է արու գավակ: Տղան  
դպրոցն ավարտելուն պես մահացել է: Ա-  
նոն նյարդերի սուր բորբոքում է ստացել:  
Հետո ծանոթացել է Վանաձորի Սամոյի  
հետ, ով հիմնականում տաք-տաք կար-  
կանդակներ է վաճառում: Երկրորդ գործը  
հեռախոսի պահեստային մասերի ու  
կմախքների առք ու վաճառքն է, որն անում  
եմ միասին:

Անոն ո՛չ կարկանդակից է դժգոհ, ո՛չ էլ  
հեռախոսից, այլ Second-Hand-ի շորերից.  
Քրչի Շուկայում հատը 50 դրամով էլ չեմ  
ծախսում: Մեծ մասը ընտիր ապրանք է, ա-  
վելի լավ է՝ նվեր տա:

Անոն ինձ ու աղջկաս մեկ պարկ շոր  
նվիրեց: Մի չորս պարկ շոր փռել մեր առաջ  
ու ասում էր. ուզում եք՝ լրիվ տարեք, ուզում  
եք՝ ընտրեք:

- Հերիք է: - Խնդրում էինք մեր ու աղ-  
ջիկ: - Էլ մի՛ տուր...

Թափված էին շորերը խառնիխառն,  
ժածքից տուժած մարմինների մեջ: Ու  
մենք էլ, տորմարդի մամն մեջտեղն ըն-  
կած, ժամերով ընտրում էինք:

Անոն կարտոֆիլ տապակեց: Կծու բի-  
բարը պարտադիր էր: Ասացին, որ իրենց  
կարող ենք շուտ-շուտ այցելել: Մենք էլ  
նրանց հրավիրեցինք, հյուրընկալվեցինք,  
ո՛չ մեկ անգամ:

\*\*\*

Անոյի եղբայրները Ռուսաստանում մեծ  
բիզնես ունեն: Գիտեն՝ քույրը վարձով ապ-  
րող է, առավելագույն չափով են օգնում:

\*\*\*

Մի անգամ, ընկերոջիցս վերջնականա-  
պես բաժանվելուց հետո էր, Անոն ինձ փո-  
ղոցից տուն տարավ: Մենք տարբեր  
խանութներում էինք եղել, հետո նոր՝ իրար  
հանդիպել: Գլխանց ասաց՝ ձեր անձնա-  
կան կյանքը իմ գործը չի, թեև ընկերոջ մո-  
տիկ բարեկամն է:

Ներս մտա, տեսա լուսավոր դեմքով  
տարեց կնոջ, արժաթված գլխով: Տնքում է,  
նայում ուշադիր: Ինձ որ տեսավ, թափով  
կիսանստեց մահճակալի մեջ, Անոն թա-  
փով բարձ դրեց մեջքին: Ծեր կինը կարկա-  
ռեց նիհարած ձեռքը: Կաշին ու ոսկորն

բուն, մորս մահից հետո, կյանքիս դժվարու-  
թյունները ինձ նորից Դինամոն քշեցին... Ես  
անգամ ոչ թե որպես հաճախորդի, այլ՝ վա-  
ճառողի: Չարենցի կողմից էի գնում միշտ:

\*\*\*

«Գոհար ջան, տատս ժածքի միջոցին  
ընկնում է պաղվալը: Ոչ մի վնասվածք էլ չի  
ունենում, մեմբրանից բացի: Հենց որ ուշ-  
քի է գալիս, փորձում է դուրս գալ մուտքը  
փակված նկուղից: Տեսնում է՝ ճամփա չկա,  
եյր չկա, մո՛տք էլ չկա: Ծվարում է էդ եքքա  
ջանդակով կինը անվնաս մնացած իր անկ-  
յունում: Տատս նախքան ժածքը մագերթը  
միշտ սարքած էր լինում, ներկած: Ինքը  
մաքուր, կոկիկ, մանիկյուն ու պիժիկյունը՝  
տեղը: Միանգամից փոխվում, ուրիշ մարդ  
է դառնում, երբ որ բախվում է իր բուն մե-  
մբրանը»: Հիշե՞նք, որ Ռոբինզոն Կրուզոն  
տարածություն ուներ շարժվելու, ստեղծե-  
լու և արարելու համար:

«80-ն անց տատիս ժածքից երկու ամիս  
անց գտանք: Նա ընթացքում բացել-կերել  
էր պահածոները, խմել բոլոր կոմպոտները:  
Իր անկյունը՝ խոհանոց ու ննջասենյակ,  
խորքերում գտնված մյուս անկյունն էլ  
պետքարան էր սարքել»: Հանկարծ հիշեցի  
Անոյի էս խոստովանությունը:

# ՊԱՀԱԾՈՆԵՐԸ

\*\*\*

- Անոն էլ, Սամոն էլ մահացել են,- ա-  
սաց Աննան Հրազդանի տոնավաճառում:-  
Սամոյի որդին փորձանքի է եկել: Սամոն  
կաթվածահար է եղել: Անոն, կարծեմ, հե-  
տո է մահացել:

Աննային երկնագույն, կանաչի մար-  
գահագուստ էի վաճառել դեռ ամռանը, Դի-  
նամոյում: Ասաց, որ վեյոյուր որակի այդ  
վերև-ներքեր շատ լավն են, ու եթե հան-  
կարծ էլի ունենամ էդ հանգի-ռանգի բան,  
հանկարծ ուրիշի չտամ: Չէ, որտեղի՞ց, էդ  
մեկն էր: Մի պարսկահայ էր սովել ինձ:  
Սուս էի արել նախնական գնի մասին՝ ես  
էլ իմ փայ դալարն եմ: Տնային տնտեսուհու  
այդ համագրեցումը ինձ վրա նստել էր ըն-  
դամենը 500 դրամ: Առևտուրը նրբություն-  
ներ ունի: Ինքը քեզ որևէ իր վերավաճառել  
չես կարող:

- Կարող ես պահեստ տալ շորերիդ մեծ  
մասը, որ ծանր-ծանր չգնաս-գաս,- ասաց  
Աննան:- Չէ, էլ սրանք չեմ բերելու: Եթե մի  
բան առաջին անգամով չի ծախվում, փո-  
խում եմ ու տեղը ուրիշ բան բերում: Բայց  
մի քանի բան մոմլաթով կդնեմ էս անկյու-  
նում՝ նույնիսկ 50 դրամ չակնկալելով: Ով  
կտանի, թող տանի:

Թողեցի մեկ շավվար՝ սև, մեկ երկար  
փեշ, դարձյալ սև, մեկ շորի՝ կաթնագույն,  
մեկ վերնաշապիկ՝ նախշավոր-նախշուն:  
Մոմլաթի բերանը պինդ կպստեցի: Ով տա-  
նում է, թող տանի, ինչ լինում է, թող լինի:  
Տեսնես Անոյի սկեսուր մայրիկը ո՞ր է:  
Ի՞նչ եղավ... Անոն պատմում էր, որ իր տա-  
տը ժածքից հետո մի հինգ տարի էլ ապրեց:  
Բայց Սամոյի մոր մահը չլսեցի-չիմացա:

Մրտումս արհավիրք սկսվեց՝ ժածք ու  
փոքորիկ, հրաբուխ: Հիշեցի մորս: Խեղճա-  
ցա: Նրա վերջին, դժվարին ու հեշտ ու  
անհնարին օրերը, որ մենք ապրեցինք  
միասին, անընդմեջ հիշեցի: Հետո... ուր  
տարի առաջ մարած հորս հիշեցի: Ապ-  
րումները, հույզերը, կյանքիս լավուկատ օ-  
րերը ստամոքսի մամն ինձ իմ ներսից  
ծամում, ավերում, ավերում, սիրտս փուշ  
զանգակ սարքած, ներսս լիքը-լիքը փոշի,  
մոխիր, մրուր, ամեռոս ու թթուր էին  
լցնում: Հիվանդացա-տեղաշոր ընկա:

Մեկ շաբաթ-կիրակի ու գումարած մի  
կես ամիս չգնացի ո՛չ Հրազդան, ո՛չ  
Դինամոն ու ո՛չ էլ Կայարան: Հարևան պայ-

ժառատես Կարինեն էր ինձ սատարում,  
մամոնայի տեսակետից, խանութպան  
Լիլոն, հարևան Գայանեն, Անահիտը,  
քույրերս, երբ որ գնացի... իրենց մոտ: Տե-  
ղաշորից մի կերպ պոկվում-փալանվում,  
վազում էի նրանց մոտ, հետո՝ տուն: Վաս-  
տակա՞ծս կանխիկ գումարը հացի ու կաթի,  
առաջին անհրաժեշտի գումար էր դառ-  
նում: Հետո որդիս գալիս ու մի բաժակ ջուր  
էր տալիս ինձ:

...Ապաքինվելուն պես առաջինը Կայա-  
րան աճապարեցի: Ինքնագույն վերցրի ա-  
վելը, նետվեցի Շուկայի բացօթյա շենք, թե  
ավելեմ: Բարդու տերևներ՝ ճնճղկաձև-  
ճնճղկագույն... Լիլան չթողեց: 80-ամյա  
Լիլան: «Պետք չի ավելի: Միայն քո տեղը  
մաքիր, եթե, իհարկե, ուզում ես մաքրել, ու  
քո տեղը կանգնիր»: Հնազանդվեցի: Մոտե-  
նում էր շաբաթ օրը: Դեռ չորեքշաբթի էր:  
Միայն Կայարանն է ամենօրյա: Շաբաթ օ-  
րը Հրազդանում էի արդեն, ու մարգարաշ-  
տով, ողջ քաղաքով մեկ բռնկված քամին,  
սուր արտահայտվածը, շուտ հեռանալուս  
պատճառը չէր: Այլ մրսածությունս կրկնվե-  
լու, արդեն հարյուր տոկոսանոց, հավանա-  
կանությունը:

Սը՛ռ, սը՛ռ օր... Նոյեմբերի վերջն է, բա  
ի՞նչ էինք ուզում: Բնական է: Ես չձգեցի  
մինչև 12.00-ը: Հացիս փողն աշխատել էի  
արդեն: Հավաքվեցի, զնգզնգա-  
լեն տուն եկա: Ով աշխատի, նա  
տունեքը տնկի՞: Ո՞վ է տեսել էս-  
տեսակ բան: Մեր կյանքը այս-  
պես է փոխվել:

Աննան Շուկա չէր եկել ո՛չ  
որպես գնող ու ո՛չ էլ որպես վա-  
ճառող: Եթե գար, համոզված  
եմ, որ ինքն էլ շուտ կգնար: Միշտ ասում  
էր՝ դեղի փող չեմ ուզում աշխատել, այլ ծա-  
ղիկներով լիքը մի զամբյուղի, որ ամեն  
գնալուց դնեմ մորս գերեզմանին:

Կիրակի օրը հրաշալի եղանակ էր:  
Ցուրտ էլ չէր: Արև կար: Հրազդանում մի  
քանի կին, սեղան առ սեղան ընկած, իրենց  
ապրանքն էին փնտրում, որ տարել ու  
երկնքով մեկ, մարգարաշտով ու աշխարհ-  
քով մեկ էր արել քամին, աշնան քամին:  
Շաբաթ-միջօրեի 15.00-ն անց կեսի փոթո-  
րիկը հրապարակել էր Շուկայի ողջ շորե-  
ղենը՝ նմուշ առ նմուշ:

Պատշաճաբից վար նայեցի, տեսա սև,  
չորրորդ համարի կրծկալ, ջրասույզի խո-  
շորապակի, նախշուն սև ակնոց, սև սապո-  
գի աջ թայր խեցեթոն շարժված...  
Իրարով եղած, արդեն քարացած-կորած  
ապրանքներից: Մոսկացի, բայց չսահմո-  
կեցի: Կիրակնօրյա ցուրտ առավոտը հրա-  
շալի էր, արևաթրթիռ: Առևտուրը՝ հաջող,  
մարդիկ՝ գոհ... Արևն էս հերթին պահածո-  
յացված կյանքի էր նման: Միակ պահա-  
ծոն, որ անհրաժեշտ է հավերժ: Ամենքիս:  
Սա է մեր դասը:

...Նկուղն ընկած Մեծ Կինը նույնպես ե-  
րազում էր այս արևի մասին, այն տաք ձմե-  
ռով երկնքի մասին, որ այդքան վիշապացած  
էր...

Անկողնային ծեր Կինն էլ՝ աջը լուսեղեն  
պարզած... Ես ձմեռը լավ դաժան է լինելու:  
Բայց էսօր թո՛ղ քշի քամին՝ աշնան քամին,  
մալ մեր վշտերը վերջնականապես քշի:  
Մայր բնությունը հույս ու անակնկալ էլ կու-  
նենա պահած:

Ահա վաճառորդի կնոջ կարկառած ա-  
ջը ամպերում է սահում: Մոտենում, հուշում  
է այս անգամ երկնքից, որ... Երկինքը երկ-  
նագույն չէ միայն, երբեմն՝ սպիտակ, եր-  
բեմն՝ սև:

Սամոյին պատահական հանդիպեցի  
հետո, վաղ գարունքին: Էլի տաք-տաք  
կարկանդակներ էր վաճառում ու արդեն  
պաղած բուկիներ՝ չամիչով, կրեմով, ջե-  
մով, խտացրած կաթով... Խաչապուրի:  
Ջրեղեն: Եվ մի թխած ու փրփրած թախիծ,  
որը և ոչ մի կերպ և ոչ մի լեզվով չի թռչնա-  
նում: Մնում է երկրին կպած, ակների ու  
սալաքարերի միջև անեացած... Չմտեցա,  
չհարցրի: «Որտե՞ղ է մայրդ» կամ «Դու չես  
մահացել, չե՞»:



Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Յոթ խաղի ՀԱՅՐԵՆԻՔ

Ա. Ես ուզում էի՝ տունտունիկ խաղային ինձ հետ, Հայրենիք, դու շատ խորացար տունտունիկի մեջ, հետո զավակներ պահանջեցիր, քնքուշ սահմաններ, հաղարջաթուփ զգացումներ:

Տունտունիկս ծաղկե՜ց-ծավալվե՜ց, ընկավ բակից բակ, քաղաքից քաղաք, դարձավ աշխարհասփյուռ մի խաղ, իսկ ես բակում մոլորվածի խռովքով տարվեցի խղճո՜ւկ ջրափոսին...

Բ. Ես ջանգլույում ու խաղ եմ ասում քեզ համար, Հայրենիք, ծաղկամոր աչքերի գուլարով վիճակ եմ հանում փարչի միջից և պատվում՝ լույսն էրեսիս, նարվե-նագուկ աղջկա մանիով. «Տո՛ւր բլուզդ՝ կարեն, տո՛ւր բլուզդ՝ կարեն, Օղակ-կոճակ շարեն...»:

Տվյալում է իր վիճակով վարող, տվյալում է է՜ն փշահարը՝ դեռ լանջիդ չհասած, թե երկար արտո ծփուն է, գամ՝ շնչկնկամ, հոգսիդ աղունը օսկեջրած ջաղաց տանեն, ջա՛ն, ջաղաց տանեն...

Գ. Ուզում էի բաղեր և որսորդ խաղալ քեզ հետ, Հայրենիք, լինել բաղերամի ճերմակփետուր-ուհին, առաջնորդել նրա հմայքը, աղմուկ հանել թայրտոցի գաղտնականչով, անգզույշ փափագել քո գրկում, բայց թևապարս չբացած՝ զարմվեցի որսորդի գնդակից, որսորդ ախպոր խելա՜ն գնդակից...

Դ. Ուզում էի կռիվ-կռիվ խաղալ քեզ հետ, Հայրենիք, բայց սիրո հախ ու հաշիվս չփակել քո կողմերում, չսակարկել հեղեղատը կրծքիդ, լեռանդ ցատկերին հյու՛

կանաչիդ հետ քաղվել, ավագիդ հետ մաղվել, գորացնել քեզ ինքնամարտիս բխումով էլ, բայց կռվիս մեջ չամի՛չ բաժանեցիր, չիր ու չամի՛չ բաժանեցիր:

Ե. Ուզում էի՝ պահմտոցի խաղային ինձ հետ, Հայրենիք, վախի փշերից անդին ծաղկել ու խրամատո փորձել իմ վրայով: Ուզում էի շեներդ վահան դարձնել ու մթի դեմ կանգնել հենց այդպես. ախր սովոր էի մանկուց՝ կռիվ-կռիվ խաղալուց էլ առաջ, երբ ինձ շարտում էի վերև՝ վահանը դիմահար պահած... Տեղով բռնոցի է այս կյանքը. իմ ուզածը փշուրն է քո խռովքի, բայց այնքա՜ն լավ եմ քաքնվում քեզնից, որ ինքս էլ չգիտեմ՝ որտե՛ղ եմ...

Զ. Ես ուզում էի քարկտիկ խաղալ քեզ հետ, Հայրենիք, զիզի քարերդ օդ նետել, մեկ-մեկ հավաքել բռիս մեջ՝ ինձնով անել, բայց այդ զիզները պտտվում, ուրու էին դառնում գլխիս, մեկ-մեկ էլ ուսիս իջնում աստղի սուլոցով...

Ծո՛, իմ ուսերից ո՞վ է իջեցնելու մանկությանս հուռութները ուրու կտրած, որ թռցնում էի բա՜րձր ու բարձրի՛կ, այնքա՜ն բարձրիկ, որ մտքիդ մեջ վա՛յ թե ասում էիր՝ համա թե հոպոպներդ եկել են:

Է. Հայրենիք, ես չէի ուզում իմ երագում անգամ սիրո դադար խաղալ: Ժամանակը խաղալ տվեց:

Քեզնից դուրս ես մոռացա գործնագործս, ցավի ճակատին ճտտացրած իմ ռեզինն ու հարվածներից հալումաշ բաղմինտոնը, և վերջապես՝ աչք փակոցիս բոլոր պակասություններիդ դեմ... Հասկանո՞ւմ ես՝ մանուկ խաղերս երեսի վրա մնացին, երբ վերցրի սնդուկ չեղածս ու վազեցի իմ հետևից՝ իբր հասուն տունտունիկի որոնումով...

Յոթ վայրկյան ուշացա ինձնից, յոթ վայրկյան հեացի... կյանքի չափ. յոթ խաղեր սուրացին իմ միջով...

Դու խաղում ես յոթ շնորհով էլ, թեև այսքան ժամանակ մեկն ես, որի համար բաց եմ թողնում ինձ ու չեմ հասնում երկիր, ու չեմ հասնում երկինք խաս փետուրի ճախրով...

ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ ԱՌԻԹՈՎ ԵՎ ԱՆԱՌԻԹ



Սամվել ԿՈՍՅԱՆ - Վերջերս լույս տեսավ Ձեր «Գոհարներ» ընտրովի բանաստեղծությունների ժողովածուն: Նոր գրքի ծնունդն ի՞նչ զգացումներ է պարգևում, արդյո՞ք ասեն նոր գրքի հետ նույնն են այդ զգացումները:

Գոհար ԳԱԼՍՏՅԱՆ - Ուղիղ քսան տարի առաջ, երբ առաջին գիրքս տպվեց, այդ զգացողությունն անսովոր զանձանակ ունենալու պես էր. մի զանձանակ, որտեղ հոգուդ թանկագին մասնիկներն ի մի ես բերել, որը, միաժամանակ, միշտ ձեռքիդ է, և կարող ես նվիրել մարդկանց, սկզբի համար՝ սիրելիներին ու մտերիմներին... Այսօր իմ արդեն ութերորդ ժողովածուն է ձեռքիս, և ես ամեն անգամ տարբեր կերպ եմ վերապրել առաջինի այդ ամենամեղեղ զգացումը՝ առաջին պահի թրթիռով անխառն... Այլ հարց է, որ իմ ամեն նոր գիրքը ծնունդն է իմ հոգևոր մեկուրիչ աստիճանի, և բնական է, որ այդ մեկուրիչ Գոհարի զգացողությունների սպեկտրը ևս ուրիշ է, բայց առաջին պահի ազդակը նույնն է՝ անդավաճան...

Ս. Կ - Ըստ Ձեզ՝ «Երգը թևե՛ր է»... Որքա՞ն հեռու կարող են տանել այդ թևերը: Գ. Գ. - Ընդհանրապես եմ իմ բանաստեղծական տողից ծնված հարցի համար: «Երգեցիկները թևավորներ են» շարքս հենց այդ թռիչքների մասին է՝ ոգևորությամբ թևավորվող մարդու՝ բանաստեղծների, նկարիչների, երաժիշտների, քանդակագործների, ճարտարապետների, մի խոսքով՝ երազանք ունեցող և այն երգով թևավորող հոգիների արարումների մասին, որոնց գոյությունը պիտի որ Արարիչ Աստծուն ևս հաճելի լինի: Կյանքի բոլոր փորձությունների միջով այդ նրանք են

ՍԵՐՆ Է ԲՈԼՈՐ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԲԱՆԱԿԻՆ

անցնում նորի արարչագործությամբ՝ վեհանալով և դրանով իսկ ավելի ու ավելի բարձրանալով: Հարցնում եք՝ «որքան հեռո՞ւ կարող են տանել այդ թևերը», կասեմ՝ «շաա՛տ բարձր», և իմ մեկ ուրիշ բանաստեղծական տողով կշարունակեմ՝ «Հեռուն ի՛նչ է որ...»:

Ս. Կ. - Բանաստեղծ Գոհարի և արձակագիր Գոհարի միջև երկխոսություն՞ն է, թե՞ հակամարտություն:

Գ. Գ. - Ինչպես որ՝ «ի սկզբանե բանն էր», իմ սկիզբն էլ բանաստեղծությունն է, և արձակագիր Գոհարը բանաստեղծ Գոհարից է սկսվում: Հարցնում եք՝ «երկխոսություն՞ն է, թե հակամարտություն՞ն», պիտի պատասխանեմ՝ «շարունակականություն»: Չեմ ասում՝ «շարունակություն», քանի որ մշտապես և՛ բանաստեղծում եմ, և՛ պատմվածքներ, հոդվածներ, էսսեներ, հեքիաթներ եմ գրում: Այդ շարունակականությունն այսօր՝ աշխարհով մեկ բողոքիս պատուհասած Covid 19-ի օրերին, ինձ ամեն երեկո՞ տազնապալի լուրերի հետ, և ամեն այգաբացի՞ աղոթքի հետ, բանաստեղծություններ գրելու է մղել, մինչդեռ օրվա մեջ՝ պատմվածք, հեքիաթ, էսսե կամ հուշագրություն է գրվել, հանրագրեր են գրվել պատասխանատվության և հոգածության մասին...

Ս. Կ. - Ցավն ի վիճակի՞ է փոխելու երջանկության Ձեր պատկերացումները:

Գ. Գ. - Ինչպես որ ցավը, այնպես էլ երջանկությունը ես ոչ թե պատկերացում, այլ ապրում եմ: Այս օրերին էլ առկա է այդ ցավը՝ համամարդկային չափումներով, դա պատերազմական օրերին հատուկ այն ցավն է, որի մեջ երջանկությունը հապաղում է... Բայց անսովոր մի բան էլ ասեմ, ես անձնական ցավի գազաթնակետին եմ եղել, վշտի մեջ՝ ամենաթանկ, ամենամտերիմ հարազատներիս կորստի, ես ինձ նաև երջանիկ եմ զգացել, որ իմ կյանքում եղել են և կան այդ անգին պարզները... Հիմա էլ, հենց այս պահին, երբ դրվագներ եմ մտաբերում մշտական կարոտներիս ողջությամբ լի օրերից՝ երբ քույրս ողջ էր ու իր աննման ժպիտով քաջալերում էր ինձ, ես երջանիկ եմ, երբ մորս ձայնն եմ առնում ներքին ականջիս, դարձյալ երջանիկ եմ, մանկությանս հեռավոր օրերից, երբ հորս եմ մտաբերում ու մեր մանկության տունը՝ եղբորս ու մեզ եմ տեսնում մանուկ, ես էլի՛ ու էլի՛ երջանիկ եմ...

Հոգեկան ցավի՝ վշտի հիշատակությամբ խոսքս սկսելով՝ պիտի հավելեմ կարևոր մի բան. «երջանիկ եմ» ասելով՝ չի նշանակում, թե քիչ անց, մեկ այլ ապրումով, նույն կորուստների ցավեցնող հիշողությունների դրվագներով դժբախտ լինելու պահեր չեմ ապրում: Երջանկությունն, ի վերջո, անխառն ուրախության վիճակ չէ: Դա հենց այն վիճակն է, որի մեջ ծայրահեղը՝ հնարավոր անկումն էլ կա, բայց որից երգեցիկների հոգին թևավորվում է ու վեհանում, որից նոր երգ է ծնվում, նոր գիրք կամ նոր մարդ... Այո՛, հենց երեխայի ծնունդը, որ կատարյալ երգ է, անգամ պատերազմի օրերին երջանկության ու ցավի խառնուրդով է լինում, այս դեպքում՝ ֆիզիկական ցավի, և ես հիմա Ձեր հարցին հենց իմ ֆիզիկական ցավի՝ բոլորովին թարմ փորձառությունը ներբերելով՝ պիտի պատասխանեմ: Երբ վերջերս ոտքս կոտրեցի ու անտանելի ցավերի մեջ էի, պակաս երջանիկ չէի: Սիրելիս ու սիրելիներիս հոգատարությունն ու ուշադրությունը երջանկության մի ուրիշ դուռ էր բացել ինձ համար, որին դիմադրելու կարիքը չկար, թեև՝ ինքնաբավ լինելու ամբողջ ներուժով պիտի որ փորձեի: Դա էլ երջանկություն է՝ ենթարկվելով թույլ տալ, որ հարազատներդ քեզ համար անեն այն, ինչն ինքդ այնքան սիրով կանեիր... Երջանկություն է այս դեպքում քեզ չզերագնահատելը, իսկ ավելի ճիշտ՝ սիրելիներիդ չթերագնահատելը: Ի դեպ, երբ վերևում խոսեցիք իմ արձակի մասին, չասացի, որ ահա իմ այդ ֆիզիկական փորձության փետրվարյան օրերի ծնունդն էր «Գետնից բարձր» պատմվածքս, որը տեղ գտավ «Գրանիշ» կայքում: Գալով պոեզիայիս՝ այդ նույն ենթատեքստում պիտի մեջբերեմ ընդամենը մի քառյակ, որը հետահայաց կարող էր և «Երգեցիկները թևավորներ են» շարքիս լիիրավ շարունակությունը դառնալ.

Ինձ ամեն անգամ նոր թևեր տվեց, Եվ այս անգամ էլ՝ զիպսե բոժոժից. Ասաց՝ հենակներ քեզ պետք չեն երբեք, Դու շարունակիր թռիչքդ՝ ճախրի՛ր...:

Աստվածային սե՛րն է, կարծում եմ, բոլոր այս վիճակների բանալին: Երջանկության զգացողությունն էլ սիրով է պայմանավորված.- սրտունդ կա՞ սեր, ամենաանհնարին վիճակներում էլ երջանիկ ես, չկա՞ այդ սերը, պետք է որ դժբախտ եղած լինես...



Հակոբ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

### ԿՈՒՏԿՐՏՎԱԾ ՕՐԵՐԻ ԵՍՏՎԱԾՔՈՒՄ

#### ՀՀԱՍԿԱՅՎԱԾ ԽԱԿ

Երկիրս, էս ի՞նչ մարդ ես, որ տառապում ես մեզ պես զավակների շարվեշառոտ գոյությունից՝ դառնալով տեսիլված ուրվական՝ քամե սանձով Անգլուխ ձիավոր, որից վախեցած ժողովուրդը, գլխից բռնված ձկան պես, պոչն ավազներին է զարկում ու անկույ աչքերը չռում մեկ՝ երկնքին, մեկ էլ՝ հողին: ...Եվ Հոր, և Որդու, և Հոգու առջև անհավատներ են վխտում խեղկատակ չինովիկների կերպարանքներով, որոնք թաքցրել են ֆեսերն ու քրտնած մատների արանքում ճերմակ թուղթ են օրորում տերողորմյալի փոխարեն, իսկ թղթին գիր է՝ արձանագրություն, ինչ-որ պատանյակի հայրենափրկիչ երազ՝ ի հեճուկս անգոր «պոչախաղի»:

#### ԱՆՄԵԿՆԵԼԻ

Մեն-ակ են ճշմարտությունների մեջ տարատեսակ: Առաջին իսկ բառիս հետ են ընդունել ԱՍՏՎԱԾՆԵՐԻ գոյությունն իբրև աշխարհի բազմակարծություն: Խիղճս այդպես էլ ո՛չ պակասեց ու ո՛չ շատացավ, իսկ հուսախաբվածները երեսիս նետեցին՝ ի՛նչ խեղճ ես, որ չես տեսնում դժբախտությունը... Նայեցի երկնքից ընկած հացին, որն ամեն կողմից պոկոտում էին, ու ինձ բան չհասավ, ինչպես հեքիաթների վերջում՝ խնձորներից և ոչ մեկը: Շրթունքներս պրկվում են. ինքնասաձներն այսպես են ժպտում՝ հանդուրժելով աշխարհի բազմաժանրությունը... Մեն-ակ են...

#### ԱՆԿՈՒՄ

Կար ժամանակ՝ գրողը հերոս էր, կանայք կուրորեն սիրում էին նրան, տղամարդիկ՝ պատկառում, երեխաները՝ սիրով ընդօրինակում, իսկ պետությունը պաշտում, դնում էր գլխին՝ մեկ՝ որպես լայնեզր գլխարկ, մեկ էլ՝ ապարոշ, փափախ ու կեպի, նույնիսկ զինվորի գլխարկ ու վեղար... ...հիմա այդ ամենը թանգարանի նկուղում է, իսկ հերոսատեղ-պատվանդանը փողով է ծածկված, ու նրա վրա հաբեզած ճեմում են պատվեր կատարող լրագրողները...

#### ԳԱՆՆԱՐՈՏ

Կյանքս քայլեցի մարդաստվածներից հեռու, քայլեցի, քայլեցի, քայլեցի, քայլեցի, քայլեցի, քայլեցի, քայլեցի... իմ կողքից, ետևից ու առջևից այլք էլ էին քայլում: Օրեցօր մաշվեց կայտառությունս, հիմա ետ են ընկել,

շուրջս ամա է... Աստված իմ, որքան ուշ հասկացա, որ ամբողջ կյանքս տանուլ են տվել սուրուի մեջ:

#### ՀԱՅՐԵՆԻՔ ԻՄ

Մեկ օրից ես փախչում, մեկ՝ ջրից, թռչչիդ թևերը թաց են, սկալող՝ անխոհիկ, արյանը կարմիր գնդիկները թափանցիկ են դարձել. ով ասես՝ գալիս, անցնում է միջով... է՛, Հայրենիք... քեզ ով ասես՝ բռնաբարում է այլախոհությամբ, իսկ դու համբերում ես կրկեսի արտիստի պես, ցատկոտում ապակու ջարդոնի ու մարմնող ածուխի վրա, լողում տղմոտ ջրերում ու... էլի դիմանում:

#### ԱՆՀԵՂԼԻ ՏԱԳՆԱՊ

Թավշե տեղորի հաշվեկշռված ձայնի տիրություն, ավա՛ղ, խեղվում են վեհ գաղափարներ՝ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎՈՒՆՔ, ՎՐԵՇ, և տարրալուծվում օտարին վայել, անհոգ «ԳՈՒԼՅԱՆԿՈՒՄ», ուր բարձր ու խրոխտ թմբուկ է զարկում հայի տակահանքը՝ գլուխը դարձած հինգերորդ կոշվող մի մեծ շարասյան... սովետականը չոր մատն է տնկել սորոսականին ու հարցնում է ինձ. «Ա՛յ աչոք տկար, ո՞րերորդ հինգի...»: Պապանձվում են ես: ...Եվ մոլորված է շատ հին մի երկիր՝ իբր թե ազատ, իբր թե անկախ, իբր թե տենչող... ամբողջացմանը:

#### ԵՐԿՐՆՏՐԱՆՔ

Սահմանի վիճակ. հատնում ենք հատ-հատ, մթնում ենք լույս-լույս... կոչնակի զանգը վաղուց խեղդել ենք խափշիկի ռեփով ու ստորադասվել վաղանցիկության քմայքների մեջ, չենք նկատում, որ փշուրը հացի կաթիլն է լացի: Սահմանի վիճակ. տարագրվում ենք՝ գույն-գույն ներկվելով մեր իսկ մարմնում, ու շատ օտար է շունչը օդ դարձած. տոթ է հոգևոր... տապ է, հորն է խոր... Սահմանի վիճակ. հեզնոտ երկինքը մեջքով հավել է դիտապաստ երկրին ու գրորում է տիեզերքն ի վար հյուլեն պայթուցիկ՝ չգիտակցված Հայրենյաց ցավի երկփեղկված մաղձին:

#### ԵՐԿՂՈՒՅՆԻ ՍՏՎԵՐՈՒՄ

Ես՝ հոգս, փլվել են փեշուր փայտին նստարանի և թանձրածոր ալիք տվել՝ ծուռումուռ, անդուր... հոգիս՝ մշուշ-գոլորշի աչքերս մարող, գլխիցս վեր սև-սպիտակ կաշաղակն է կշկչում անդուլ՝ ծառի ճյուղը հարազատ ամբիոն դարձրած... ո՛նց է կշկչում պղպեղ կերած պատգամավորի պես: Մուլեցի ուժգին... չկարեց ձայնն այդ հոգեառը՝ իշխանական ոգով տոգորված. քարով խփեցի... վրա տվեցին պահապանները կենդանիների ու ներարկեցին երակներիս մեջ իբր պակասող խղճի... շիճուկը, որ համբերությունս չունենա սահման... որ ես հասկանամ՝ հոգսով ապրելն է երջանկությունը սպիտակ ու սև գունամամլիչում:

#### Ի ԳԵՊ ՀԱՅՐԵՆԻՔ

Մինչ փափկասուն տիկնայք Հայոց աշխարհի, ազգային ժողովի ամբիոնը գրկած, օրգազն են ապրում, հոգսից ծանրացած հայուհիները հարճեր են դառնում «սիվտակ տմի» զխկրոված գեր առնետների հարբած տոփանքում... ...սողոմ-գոմորը հեռու չէ այնքան...

#### ՆԵՐԿԱՅԻ ՄՈՒԺՈՒՄ

Այս քանի դար է՝ արյանս երկրում կյանքը թերթվում է Նիկոլի թվից կախ ընկած, անտես օրացուցանքով: Հոգի է մաշում քաղաքակրթված հավախմբերի երգը կշկչան, որոնք, հիացած փոփով աբրորի կարմիր վզկախով, երկինքներ շանթող վեհ արծիվների ճախրն են փնտվում... համատարած է. կույր թե աչքաբաց, ով լեզու ունի, «սուրբ» մարգարե է իրեն համարում, պայծառառեսի համոզվածությամբ քրթմնջում անվերջ. «Ախր ասողին լավ լսող է պետք»: Կյանքը և մահը ամբողջություն է, ու երբ որ մահին ուզում են խաբել, դու ես հենց խաբվում... ...այսահարից ու չորաշունչ թվից ես այս ո՞ր հասա, երբ որ տեսածս մոռացություն է՝ Հայկյան տոմարի բռնաբարություն, իսկ լսածս՝ զավեշտից եկող անտարբեր ծիծաղ: ...Թժվաշ խոտոլ կեր, թթվաշ խոտոլ... կեր:

#### ՀԱՅԱՍՏԱՆ, ՄԱՅԻՍ, 2018 թ.

Բռնաբարված, բայց... գուլպա հայրենիք, երեխայի կամ տարփոռու նման գրկից գիրկ անցել, մեկ ծծել սև կաթ, մեկ էլ՝ ի՛նչ ամոթ. բեղմնավորվել ես մթնախորշանքից ու եկել, հասել Նիկոլի նոր թիվ՝ ինքնամաքրումի հավատը պահած, թե կգա օրը՝ բերելով բարին, և գորությունը, լույս-հոգի դարձած, քամեզարկ կանի երկկացության օղը հայադավ, որ արտաշունչն է բարեկամներիդ: Մակայն... օրվա փոխարեն բացվեց մի նոր դար և նորածնի պես ձեռքը նետելով՝ իր պորտալարը շա՛տ ամուր բռնեց, ինքնաբուխ ճչաց՝ օն անդր, առաջ...

#### ԳԱՅԹԱԾ ԺԱՄԱՆԱԿ

Քոր տվող ցանի պես հայ գաղթօջախները սփռված են աշխարհով մեկ, իսկ ամենամեղքը, որ լացի չափ ցավոտ է, իմ Հայաստանն է, որովհետև անհայրենիք ՊՈՒԽՑԱՅՆԵՐՆ այստեղ այնքան շատ են ու ամենուր, որ օր օրի, ազգի «փրկիչներին» հակառակ, պակասում են ազգայինները, ու նրանց մեկ ռուսի օրհնված ոտքն է տորթում, մեկ էլ՝ ինչ իմանամ՝ ո՛ւմ... (տեսնես մի օր կբացվե՞ն ԿԳԲ-ի արխիվները), ...առեղծված Հայաստան... բա բանաստեղծներ՞ող... բանաստեղծները թյուր Դավիթի մասին կարծես էլ չեն գրում. օրվա հերոսը Փոքր Միերն է՝ ազգուտակի հետ հայրենիքը լքած:

#### ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Այս հողը ծարավ թե երկինք չունի, Ծառն ինչպե՞ս պիտի կանաչներ հագնի, Արմատ ու սաղարթ ճյուղերով պատի, Հավերժի ճամփան մեղմիլ հովիարի:

Այս ջուրը հոտող թե չունի երկինք, Հոգին ինչպե՞ս պիտ երգի հայրենիք, Կյանքի բաբախը դառնա խենթ ալիք, Մրբի չար ու դավ, շենացնի տանիք:

Այս հողը, ջուրը երկինք չունեն թե, Դավաճանության սարսուռով խեթն Ո՞վ է մոլորվում ունայնում մութե, Մոռանում կենաց լույս-սերը կաթե:

Այս հո՞ղը երկինք չունի, թե՞ ջուրը... Ամբողջ երկնքի արցունքացող Ո՞վ է հավաքում, լցնում իր սիրտը, Որպես հոր արյուն, ինչպես մոր... կաթը:



Միլենա ԲԱԼԴԻՅԱՆ

«ԼՈՒՌ-ուՄՈՒՆՁ» շարք

Գրիր...
Գրիր՝ խոսենք...
Խոսենք, մինչև արևը
կորոշի արթնանալ,
մինչև իր մանր, բայց ծակող շողերով
կփորձի միջամտել մեր
խոսակցությանը,
մինչև կգա ու իր ներկայությամբ չի
թողնի, որ մենք մենակ մնանք...
Կգա ու քեզ էլի կտանի ինձանից,
իր քարոզ ջերմությունը քեզ կտա
ու դու նորից կարթնանաս...
ու նորից ե՛ս չեմ լինի քեզ արթնացնողը:
Գրիր:
Գրիր՝ խոսենք...
Խոսենք, քանի դեռ ժամանակ ունենք,
քանի դեռ մենք ենք՝ երկուսով...
Քանի դեռ ոչ ոք չի որոշել
քեզ տանել ինձանից:

Դու միայն գրիր:
Գրիր՝ խոսենք...
Խոսենք առանց տառ, առանց բառ,
լռությամբ խոսենք
միմյանց հպված
մի շնչով
մի շարժումով՝
այդպես կխոսենք:
Գրիր, որ խոսենք:

\*\*\*
Էջերը մնացին սպիտակ.
Չեռագիրդ չդաջվեց...

\*\*\*
Խոսիր,
Չլռես այլևս,
Չեմ թողնելու,
Չեմ սփռվելու,
Փայփայելու...
Նայիր,
Չփակես աչքերդ,
Արգելում եմ,
Խանգարում եմ,
Սիրիր,
Ես թողնում եմ,
Գրկում
ու համբուրում եմ...
Նվիրիր
ինձ՝
քեզ...

\*\*\*
Ուզում էի կյանքումս մի բան փոխել:
Դու չեկար...
Իսկ ես փոխեցի վարսերիս գույնը:

\*\*\*
Հիմա չգիտեմ՝ դու ուր ես:
Չգիտեմ՝ դու ումն ես:
Դու ինձ լսու՞մ ես, տեսնու՞մ...
կարոտու՞մ ես:
Ես չգիտեմ՝ դու ուր ես,
ո՞նց ես, ո՞նց չես...
Կարոտում եմ, բայց չե՛,
դա քեզ համար չափից դուրս շատ է:
Դու էլ իմը չես... ինձ հետ չես...
ինձ մոտ չես...
Դու այնտեղ ես, որտեղ քեզ լավ է...
երևի...
Դու այնտեղ ես,
որտեղ քեզ սպասել եմ...

\*\*\*
Երբեք չեմ եղել և չեմ լինի միակդ,
Գիտեմ, զգացել եմ,
կարող ես լուռ մնալ հիմա:
Սիրել եմ, փոխարենն
ատել չեմ կարողացել
Ու քեզից հեռու շատ եմ մնացել:
Հերիք է, գրել ես, ու ամեն ինչ փոխվել է,

\*\*\*
Բառերս մնացել են օդում,
Նրանք չգիտեն՝ ինչպես գրելի քեզ...

\*\*\*
Երբեք չեմ եղել և չեմ լինի միակդ,
Գիտեմ, զգացել եմ,
կարող ես լուռ մնալ հիմա:
Սիրել եմ, փոխարենն
ատել չեմ կարողացել
Ու քեզից հեռու շատ եմ մնացել:
Հերիք է, գրել ես, ու ամեն ինչ փոխվել է,

Նամակդ գլխիվայր ամեն ինչ փոխել է,
Ու հիմա ցավում է հերթական անգամ
Իմ մեջ մնացած կարոտն իսկական...

\*\*\*
Մեքենան կանգ առավ:
Կանգ առավ ճանապարհի
ամենահետաքրքիր
հատվածում, ամենահետաքրքիր
պահին,
ամենահետաքրքիր ժամանակ:
Կանգ առավ ու
չցանկացավ էլ ընթանալ:
Ես իջա մեքենայից:

\*\*\*
Դու չկաս, այստեղ չես,
Միշտ էլ քիչ ես եղել.
Թե հանկարծ անգամ եկել ես,
Մեկ է, դու ինձ չես հերիքել...

\*\*\*
Ու դու կարևոր դարձար,
Քեզ սիրելու համար չափից
շատ ուժ չպահանջվեց,
Դու արդեն ունեիր քո տեղը, այն պետք
էր ուղղակի զբաղեցնել:
Քեզ կորցնելու վախից ես
դադարել էի նայել կողքերս,
Որ հանկարծ չտեսնեմ,
թե ինչպես ես հեռանում:
Չայնել չկային, լռությունն էր
խոսում մեզ հետ,
Մեր մտքերն էին փարվում... կարծես,
Բայց ոչ էր, լռությունն էր
արդեն քեզ հետ...

ՀԻՇԵՆՔ ԵՎ ԵՐԱՄՏԱԳՊԱՐՏ ԼԻՆԵՆՔ

Սկիզբը՝ էջ 2
Էին աշխատատեղերը,
ոչ ճիշտ ժամանակին
և ոչ ճիշտ ձևով իրականացված դրամա-
կան ռեֆորմն էլ իր հերթին ջարդեց
բնակչության ողնաշարը: Մի խոսքով,
իրավիճակ, որից Հայաստանը միայնակ
դուրս գալ չէր կարող:

Հայաստանին օդ ու ջրի պես
անհրաժեշտ էր դրսի օգնություն, սակայն
պետությունների միջև տնտեսական
փոխհարաբերությունները կարող են
զարգանալ միայն փոխշահավետ պայ-
մանների դեպքում, մի բան, որը չէր կարող
ապահովել Հայաստանի տնտեսությունը:
Որևէ երկրի հետ հարաբերություններ
հաստատելիս յուրաքանչյուր կողմ իր սե-
փական տնտեսական ու քաղաքական
շահերն է հետապնդում, այդ իմաստով
Հայաստանն այդ ժամանակ ոչինչ կամ
գրեթե ոչինչ չուներ փոխշահավետ գոր-
ծընկեր լինելու համար: Այդ դեպքում
միայն սրտացավ, անշահախնդիր, ա-
ռանց ակնկալիքների մեկնած ձեռքը կա-
րող էր նրան դուրս բերել այդ փակուղուց:

Որպեսզի ամեն ինչ պարզ դառնա, խո-
սենք փաստերի լեզվով:

1992 թվականն էր: Ամենաձանր տա-
րիներից մեկը Հայաստանի և հայ ժո-
ղովրդի պատմության մեջ: Արցախյան
պատերազմի ամենաթեժ օրերն էին, երբ
մեր բանակն ամեն օր նորանոր վիրավոր-

ներ ու զոհեր էր տալիս: Մահվան վտան-
գը նորից սեղմել էր մեր հավաքական ու-
ժի բռունցքը: Այդ բռունցքն իր
աստեղային ժամն էր ապրում, գործում
պատերազմի տրամաբանությունից դուրս
գտնվող սխրանքներ:

Սխրանքը՝ սխրանք, բայց անգամ ա-
մենաքաջ զինվորին կերակրել է պետք,
ռազմաճակատին հաց ու զենք է պետք,
որը պիտի ապահովի նաև թիկունքի անվ-
տանգությունը:

ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-
Պետրոսյանը կանգնած էր լուրջ խնդրի
առաջ: 1992 թվականի հուլիսի 16-ին պա-
տերազմի մեջ գտնվող Հայաստանում
մնացել էր ընդամենը երկու ամսվա հաց:
Ի՞նչ անել: Սպասելու կամ հրաշքի հավա-
տալու ժամանակ չկար: Լ. Տեր-Պետրոս-
յանի հայրական ընտանիքը 1946-ին
զաղթել էր Հալեպից, և նա որոշեց երկրի
համար օրհասական այդ պահին հա-
յացքն ուղղել դեպի պապերի փրկության
ափ՝ Հալեպ:

Արտաքին գործերի նախարարության
աշխատակից Պողոս Սարաջյանի միջո-
ցով, ով Հալեպում ՀՀ առաջին հյուպա-
տոսն էր, Լևոն Տեր-Պետրոսյանը նամակ
ուղարկեց Սիրիայի Արաբական Հանրա-
պետության գործող նախագահ Հաֆեզ ալ
Ասադին և խնդրեց Հայաստանին օգնու-
թյուն ցուցաբերել:

Սիրիայի կառավարությունը որոշում
կայացրեց ընդառաջ գնալ Հայաստանի
նախագահի խնդրանքին, օգնել դժվար
վիճակում հայտնված հայ ժողովրդին և
վեց հազար տոննա ցորեն տրամադրեց
Հայաստանին:

Անգնահատելի էր ճանաչված արա-
բագետ և դիվանագետ Պողոս Սարաջյա-
նի դերը: Նրա կաթնեղբայր և մանկության
ընկեր Վահիբ Ֆադելը Սիրիայի նախա-
գահի աշխատակազմի ղեկավարն էր, և
հենց նրա կարգադրությամբ մեր երկրին
հատկացվեց ցորենի լավագույն տեսակը՝
կարծր ցորեն: Եվ երբ Սարաջյանը հեռա-
խոսով շնորհակալություն հայտնեց իր
արաբ ընկերոջը, վերջինս պատաս-
խանեց. «Ի՞նչ շնորհակալության մասին է
խոսքը, չե՞ որ մենք կաթնեղբայրներ ենք»:

Այստեղ արժանի պետք է մատուցել
նաև ՀՀ նախագահի աշխատակազմի ղե-
կավար Շահեն Կարամանուկյանին, ում
նախաձեռնությամբ այդ վճռական պա-
հին կարողացան միավորվել Սիրիայի
հայ ազգասերները: Ամեն մեկն իր ուժերի
ներածին չափով լծվեց հացահատիկի ա-
ռաքման գործին: Հնչակյան, ռամկավար,
դաշնակցական կուսակցությունների, բա-
րեգործական միությունների հայ ազգա-
սեր տղաները միասնական ուժերով
կազմակերպեցին վեց հազար տոննա ցո-

րենը երեք մավերի վրա բարձելու աշխա-
տանքը:

Հացահատիկի փոխադրման ճանա-
պարհն անցնելու էր Թուրքիայով, այլ ճա-
նապարհ գոյություն չուներ: Սիրիայի
Լաթաքիա նավահանգստային քաղաքից
նավերը մեկնեցին Թուրքիա՝ Հոպայի նա-
վահանգիստ: Հետագա բեռնափոխադ-
րումն իրականացրեց թուրքական Care
ընկերությունը: Առիթը ներկայացել է՝ ար-
ժանին մատուցելու նաև այդ ընկերության
նախագահ Ադիլ Օզկապտանին:

Պետք է ասել, որ այս հայրենամուտ
գործին իրենց անգնահատելի մասնակ-
ցությունը բերեցին նաև ՀԲԸՄ Սիրիայի
ատենապետ Նուբար Շարվոլյանը,
նույն միության քարտուղար Գևորգ
Սարյանը, Արուշ և Վարուժ Եսայանները,
Կարպիս Կասաբյանը, Արել Միրզայանը,
դոկտոր Ղազար Պողոսը, Հովհաննես
Ուստա-Կարայանը, Տիրան և Արշակ Ամ-
պարճյանները:

2015-ին, հայերիս հետ միասին, աշ-
խարհի առաջադեմ մարդկությունը ոգե-
կոչում էր Հայոց Մեծ եղեռնի սուրբ զոհերի
հիշատակը, պատերազմի մեջ գտնվող
Սիրիան չմոռացավ, և կառավարության
որոշմամբ Դամասկոսի հայոց եկեղեցու
հրապարակն անվանվեց Հայոց եղեռնի
նահատակների հրապարակ:

Հիշենք և երախտապարտ լինենք:

1. «Վերածնված Հայաստան» ամսագիր,
1989 թ., թիվ 6:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԻ» ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ
Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում արտակարգ դրության պայմանավորված՝ «Գրական թերթը» առժամանակ
լույս կտեսնի առցանց տարբերակով:

Գրական Թերթ
Գլխավոր խմբագիր՝
Կարինե ԽՈՒԴԻՎՅԱՆ
Հրատարակում է «ՀԳՄ ՀԿ «Գրական թերթ» խմբագրություն» ՍՊԸ-ն:
Վկայական՝ 02Ա 051126: Գրանցման թիվ՝ 1175: Ծավալ՝ տպ. 2 մամուլ:
Տպարանակ՝ 1000: Գինը՝ 100 դրամ: Լույս է տեսնում յուրաքանչյուր ուրբաթ:
Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Խմբագրությունը ոչ միշտ է
համակարծիք հեղինակների արտահայտած տեսակետներին: Արտատպության դեպքում հղումը «Գրական թերթին» պարտադիր է: Թերթը
տպագրվում է պետական մասնակի աջակցությամբ: Տպագրությունն իրականացրել է «Վան ԱՐՅԱՆ» ՍՊԸ-ն՝
ՀԳՄ «Լ. Չ. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ» տպագրատանը:
0019 Երևան 19, Մարշալ Բաղրամյան պող. 3, էլ. փոստ՝ grakan-tert@yandex.ru, grakantert@gmail.com